«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

22 Սեպտեմբերի 2022, N 1 - 7 (հարցման կարգով)

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, ժամկետից շուտ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող Տարոն Գեղամի Գալստյանի ուսանողական իրավունքները վերականգնելու մասին

Լսելով և քննարկելով՝
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2020 թվականի սեպտեմբերի 22-ի N ՈՒՄ /78/ 1-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարում համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված (վճարովի հիմունքներով), բանակ զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2021 թվականի փետրվարի 16-ի N ՈՒՄ /20/ 10-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից ուսումնառությունը դադարեցրած, 2022 թվականի ապրիլի 19-ին զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (23.08.2022) դիմած ուսանող Տարոն Գեղամի Գալստյանի ուսանողական իրավունքները 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում վերականգնելու մասին հարցը:

Հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում

ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ Տարոն Գեղամի Գալստյանը սահմանված ժամկետում իր ուսանողական իրավունքները վերականգնելու համար չի դիմել համալսարան, քանի որ ունեցել է հոգեբանական խնդիրներ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Տարոն Գեղամի Գալստյանի ուսանողական իրավունքները վերականգնել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Տնտեսագիտություն» մասնագիտության **«Տնտեսագիտություն» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսում 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից:**

   Հաշվի առնել, որ Տարոն Գեղամի Գալստյանը մինչև բանակ զորակոչվելը՝ 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանում հանձնել է կրթական ծրագրով նախատեսված բոլոր դասընթացների ստուգարքներն ու քննությունները, բացառությամբ «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն» (4 կրեդիտ) դասընթացի ստուգարքի:

2. Հանձնարարել տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանին՝ կազմել և հաստատման ներկայացնել **Տարոն Գեղամի Գալստյանի** 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից 1-ին կուրսում վերականգնվելու համար առաջացած առարկայական ստուգարքների և քննությունների հանձնման ժամանակացույցը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2022 թ. սեպտեմբերի 22
Երևան